



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիոլոգիայի Ինստիտուտի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցանկացած երկրի իրական հատվածում իր ուրույն տեղն ու դերն ունի գյուղատնտեսությունը, որը տնտեսության զարգացման, զբաղվածության ապահովման և բնակչության ընդհանուր կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն



ուղորտներից մեկն է: Այն կարևոր դերակատարում ունի Հայաստանի տնտեսության զարգացման և կայունացման գործընթացում՝ ապահովելով երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 20%-ը, զբաղվածության շուրջ 40%-ը, և միաժամանակ ունենալով արտահանման մեջ գյուղատնտեսական ու դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքների ավելի քան 20%-ը: Զարգացած երկրներում գյուղատնտեսությունը դիտվում է որպես ռազմավարական ճյուղ, և որի բարելավման համար օգտագործվում են պետական միջոցներ: Ուստի՝ ելնելով տնտեսապես զարգացած երկրների տնտեսվարման փորձից, և հաշվի առնելով Հայաստանի կենսագործունեության ու տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը, անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ոլորտի ֆինանսավորման ներկայիս մեխանիզմներն ու արտադրվող արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականությունը՝ կապված հիմնականում վարկավորման ու ներդրումային գործընթացների հետ: Գյուղատնտեսության ոլորտը պայմանավորված է փոքր գյուղացիական տնտեսություններով, որոնք խոցելի են ոչ միայն շուկայից եկող տնտեսական (ապրանքի գին, պահանջարկ) և բնակլիմայական պայմաններից, այլ նաև պետական ֆինանսավորման ու նպատակադրված սուբսիդավորման սխեմաների բացակայությունից և մատչելի վարկային միջոցների անհասանելիությունից: Անհրաժեշտ է նշել, որ տնտեսության կարգավորման

առումով, մի շարք խնդիրների լուծման համար երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումն՝ ուղղված գյուղատնտեսության ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը, որի հիմքում ընկած է ֆինանսավորման հարցը: Ընդհանուր առմամբ, այժմյան պայմաններում, Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեծ մասը՝ մոտ 97%-ը, արտադրվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ մնացածը՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում: Նշենք նաև, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 2015թ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ կազմելով 1001.2 մլրդ դրամ (տես աղյուսակում):

(ընթացիկ գներով, մլրդ. դրամ)

	2012	2013	2014	2015
Ընդամենը				
Գյուղատնտեսություն	841,5	919,1	993,5	1001,2
բուսաբուծություն	516	572,8	605,7	605,8
անասնաբուծություն	325,5	346,3	387,8	395,4

Հատկապես վիճակագրական տվյալները վկայում են, որ ունենալով 340 հազար գյուղացիական տնտեսություն, որոնք մշակում են 400 հազար հա հող, և որտեղ արտադրանքի էժանացման ճանապարհին արդյունավետության բարձրացումն է, պահանջվում է գյուղացիական տնտեսությունների խոշորացում, և որի արդյունքում կնվազի նաև լրիվ ինքնարժեքը, իսկ դրանց հասնելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական նշանակության բոլոր հողերի պարտադիր մշակման քաղաքականության իրականացում:

Գյուղատնտեսության դերը կարևորվում է նաև երկրի պարենային անվտանգության ապահովման տեսակետից, որտեղ նախատեսվում է պարենային ապահովման մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում:

Գյուղատնտեսության զարգացումն իր անմիջական ազդեցությունն է ունենում ոչ միայն սննդամթերքի արտադրության, այլ նաև ոլորտում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության և նրանց եկամուտների ապահովման, ինչպես նաև բնակչության աղքատության մակարդակի նվազման գործում: Չնայած նշված որոշ տնտեսական աճին, գյուղատնտեսությունը Հայաստանում մնում է դեռևս խոցելի ոլորտներից մեկը, որը կարիք ունի հետևողական պետական քաղաքականության:



Մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացում՝ ուղղված ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը, որի հիմքում էլ ընկած են գյուղատնտեսության ֆինանսավորման հարցը: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որը կապահովի մասնավոր կապիտալի ներգրավումը գյուղատնտեսության ֆինանսավորման գործում, քանի որ ավելի կարևոր է մասնավոր կապիտալի ընդգրկումը այս գործում՝ լուծելու ֆինանսավորման գործընթացի անընդհատության ապահովումը:

Գյուղատնտեսության ֆինանսավորումը պետք է նպատակաուղղվի՝

- ➡ մաշված և հին սարքավորումների փոխարինմանը,
- ➡ նոր տեխնոլոգիաների ներդրմանը,
- ➡ գյուղատնտեսական արտադրության ընդլայնմանը,
- ➡ արտադրության նոր տեսակների ձևավորմանը:

Ոլորտի ֆինանսավորումը վերաբերվում է ոչ միայն և ոչ անյքան պետական սուբսիդավորմանն ու պետական մասնակցությամբ տարբեր ֆինանսավորման և

վարկավորման ծրագրերի իրականացմանը, որքան որ մասնավոր կապիտալի ընդգրկմանն այս գործընթացին:

Գյուղատնտեսությունը զգալի մասնաբաժին ունի Հայաստանի ՀՆԱ-ի մեջ և կարող է էապես նպաստել տնտեսական հետագա աճին: Չնայած, գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ նվազել է 2000թ-ից սկսած, այնուամենայնիվ այն կազմում է ավելի քան 20%: 2000-2015թթ Գյուղատնտեսական արտադրանքը կայուն աճ է արձանագրել, բացառությամբ 2009թ-ին, որը պայմանավորված է ֆինանսական ճգնաժամով: Ճգնաժամի հաղթահարումից հետո եղել է տնտեսական աճ համապատասխանաբար՝ 2013թ. 19,1%, 2014թ.-ին՝ 19,3%, 2015թ.-ին՝ 17,7 :

Գյուղատնտեսության արտադրանքի ավելացումը տնտեսական աճի հետ մեկտեղ, մեծապես նպաստել է ոչ միայն քաղաքային բնակչության եկամուտների աճին, այլ նաև աղքատության մակարդակի նվազմանը: Առանձնակի է գյուղատնտեսության դերն աղքատության հաղթահարման գործում:

Գյուղատնտեսության զարգացումն իր անմիջական ազդեցությունն ունի ոչ միայն սննդամթերքի արտադրության, այլ նաև ոլորտում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության ու նրանց համապատասխան եկամուտների ապահովման և աղքատության մակարդակի նվազման գործում: Չնայած հանրապետությունում պարենամթերքի հիմնական տեսակների մասով ինքնաբավությունն ունի բարձր մակարդակ, սակայն այն չի համապատասխանում կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներին: Ըստ ԱՎԾ-ի տվյալների, 2012թ-ին, բնակչության 32,4%-ը եղել է աղքատ, նրանցից՝ 13,5%-ը՝ շատ աղքատ, իսկ 2,8%-ը՝ ծայրահեղ աղքատ: 2012թ-ին 2008թ-ի համեմատ աղքատության մակարդակը գյուղական բնակավայրում աճել է 4,6%-ով, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 4,9%-ով: 2015թ-ի ընթացքում Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 29.8%՝ 2008թ-ին արձանագրված 27.6%-ի



դիմաց: Շատ աղքատների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ կազմել է 10.4%՝ 2008թ-ին արձանագրված 12.6%-ի դիմաց: Ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 2.0%՝ 2008թ-ին արձանագրված 1.6%-ի դիմաց:

Սակայն շատ մեծ է աղքատության մակարդակի տարբերությունն ըստ մարզերի: Աղքատության մակարդակը բարձր է այն ընտանիքներում, որոնք հողագուրկ են կամ ունեն փոքր հողակտորներ, հողի ոռոգման սահմանափակ



հնարավորություն, չունեն կամ ունեն շատ քիչ գյուղտեխնիկա կամ արտադրական հնարավորություններ և հիմնականում ֆինանսական աղբյուրները սահմանափակ են: Ըստ գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակի, 2014թ գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը կազմել է երկրում զբաղվածների 37,3%-ը, իսկ 2015թ նվազել է՝ կազմելով 35,8%:



Արտահանում



Մեծ է գյուղատնտեսության դերն արտահանման ոլորտում: Առանձնակի շեշտադրում պետք է դրվի այն ապրանքատեսակների վրա, որոնք ունեն մրցակցային առավելություններ: Պետության աջակցությունն այստեղ, բացի հարկային և մաքսային արտոնություններից պետք է լինի նպատակային ֆինանսավորում, օտարերկրյա իրացման շուկաների բացահայտում և ապրանքների արտահանման կազմակերպում: Գյուղատնտեսական արտահանումն երկրի զարգացման համար, բացի մակրոտնտեսական տեսանկյունից, կարևորվում է նաև դիվերսիֆիկացված իրացման շուկաների ձևավորումը, որի համար էլ անհրաժեշտ են՝

- հարկային և մաքսային խթանների ստեղծում,
- արտահանող ձեռնարկությունների ստեղծման և դրանց գործունեությունը ընդլայնելու ֆինանսական աջակցություն,
- արտոնյալ ռեժիմով առևտրային շուկաների ստեղծում:

Արտահանվող ապրանքների տեսականու դիվերսիֆիկացման միջոցով ապրանքների արտահանման ծավալների ավելացումը հանդիսանում է որպես

ռազմավարական խնդիր: Ցանկալի կլինի ստեղծել արտահանումն ապահովագրող պետական կառույց՝ մասնագիտացված արտահանման ռիսկերի գնահատման գործում:

Տնտեսական աճի հետ մեկտեղ արտահանման կառուցվածքում ավելացել է գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը:

Ամբողջ 2016թ-ի ընթացքում Հայաստանն աշխարհի հետ 5.075 մլրդ դոլարի առևտուր է արել: 2015թ-ի համեմատ այս ցուցանիշը 7.4%-ով աճել է: Ընդ որում՝ աճը մեծապես պայմանավորված է արտահանմամբ:

Չնայած արտահանման ավելացումն էական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսական աճի վրա և նախորդ տարվա ցուցանիշների շարքում եզակիներից է, որ դրական տեղաշարժ է գրանցել, սակայն ոլորտի գլխավոր խնդիրներից մեկը՝ կենտրոնացվածությունը, մնում է չլուծված: Հայաստանի արտահանումը կենտրոնացված է թե՛ ըստ ապրանքների, և թե՛ ըստ երկրների: Հետևաբար, գրանցված աճն էլ ապահովվել է սահմանափակ թվով երկրների ու ապրանքների հաշվին:


Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների (ՀՀ ԱՎԾ)՝ 2016թ-ին Հայաստանից արտահանվել է 1,783 մլրդ դոլարի ապրանք: Մեկ տարում այն աճել է 20%-ով: Սակայն հիշենք, որ 2015թ-ին գրանցվեց արտահանման շուրջ 4% անկում: Այսինքն՝ նախորդ տարվա աճը մասամբ պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ համեմատում են 2015թ-ի նվազած ցուցանիշի հետ: Ամեն դեպքում ծավալները վերականգնվել են և գերազանցել 2014թ-ի մակարդակը: Ավելին՝ սա վերջին առնվազն հինգ տարիների ամենաբարձր ցուցանիշն է:

Իսկ ներմուծումը կազմել է 3,292 մլրդ դրամ, որի աճն ավելի թույլ է՝ 1,6%:



ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները

2012-2016թթ (մլրդ ԱՄՆ դոլար)




Արտահանման աճը նպաստել է, որ աշխարհի հետ առևտրում Հայաստանի բացասական հաշվեկշիռը կրճատվի: Եթե 2015թ-ին Հայաստանը 1,754 մլրդ դոլարով ավելի շատ ապրանք է ներմուծվել, քան արտահանել, ապա 2016թ-ին այս ցուցանիշը կրճատվել է 244 մլն դոլարով ու կազմել 1,509 մլրդ դոլար:

2016թ-ին Հայաստանից արտահանված ապրանքների 23.1%-ը «հանգրվանել» են ԱՊՀ երկրներում, հիմնականը Ռուսաստանում (20,8%): Իսկ 26,9%-ը բաժին է ընկել ԵՄ երկրներին, մնացած 50,1%-ն՝ այլ երկրներին: Մեկ տարում ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտահանման կազմում աճել է 3,8 տոկոսային կետով՝ ի հաշիվ Ռուսաստանի: Իսկ ԵՄ-ի մասնաբաժինը նվազել է 0,9 տոկոսային կետով:

Հայաստանի արտահանման գլխավոր շուկաների տասնյակը հետևյալն է՝ Ռուսաստան, Բուլղարիա, Վրաստան, Գերմանիա, Կանադա, Իրաք, Չինաստան, Իրան, Շվեյցարիա և ԱՄՆ: Այս ցուցակում որոշ վերապահումներով կարելի է ներառել նաև Նիդերլանդները, Բելգիան ու ԱՄՆ-ը: Արտահանման հիմնական շուկաները հենց այս տասնյակով էլ, ըստ երևույթին, եզրափակվում են: Թե՛ ապրանքների, և թե՛ երկրների մասով կենտրոնացվածությունը Հայաստանին

կախվածության մեջ է պահում այդ ապրանքների համաշխարհային գներից և այդ երկրների տնտեսական վիճակից:


Արտահանումը Հայաստանից 2016 թվականին ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար)



2016թ-ին Հայաստանից արտահանման աճի վրա առավել մեծ ազդեցություն են ունեցել դեպի Ռուսաստան (աճը՝ 51,5%), Բուլղարիա (93.1%) և ԱՄՆ (7 անգ.) արտահանման աճը: Որպեսզի ասվածն ավելի պարզ լինի, նշենք, որ բացարձակ թվով նշված 20% աճը կազմել է շուրջ 296 մլն դոլար, որից 126 մլն դոլարը դեպի ՌԴ արտահանման աճն է, 73,5 մլն դոլարը՝ Բուլղարիա, 54,7 մլն դոլարը՝ ԱՄՆ: Այսինքն՝ 296 մլն դոլարից ավելի քան 254 մլն դոլարն ապահովել են նշված երեք երկրները:

Ազդել է նաև դեպի Իրաք արտահանման ծավալների ավելացումը, ինչպես նաև՝ դեպի Շվեյցարիա, Վրաստան ու Կանադա: Կան այլ երկրներ ևս, որտեղ ՀՀ-ից արտահանումն աճել է, սակայն նրանց կշիռը մնացած երկրների համեմատ փոքր է, հետևաբար՝ ազդեցությունը մեծ չի եղել: Օրինակ՝ Լեհաստանը, Չեխիան, Լիտվան և այլն:

Միաժամանակ զգալի անկում է գրանցվել դեպի Չինաստան արտահանման մասով (նվազումը՝ 41.7%): Հայկական ապրանքների պահանջարկը նվազել է նաև Թուրքմենստանում, Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Ռումինիայում ու Գերմանիայում:



ՀՀ արտահանումն ըստ 2016թ. գլխավոր 10ը շուկաների (մլն ԱՄՆ դոլար)

Դեռևս 5 տարի առաջ Հայաստանի համար արտահանման առաջատար շուկաներից էր նաև Բելգիան, սակայն այս երկրի կշիռը գնալով նվազում է. 2016թ-ին այն կազմել է 2.3%:

Այսպես, դեպի Ռուսաստան արտահանվող հայկական ապրանքների տեսականին, ի տարբերություն մյուս երկրներ կատարվող արտահանման, սահմանափակ չէ՝ հանքային ջրերից մինչև պանիր, ոսկերչական իրերից մինչև ոգելիչ խմիչքներ:

Մնացած երկրների մասով տեսականին բավականին սահմանափակ է: Արտահանման հիմնական մասը բաժին է ընկնում լավագույն դեպքում երեք-չորս ապրանքախմբի:




Դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ Հայաստանն արտահանում է մեծամասամբ ծխախոտ և ոսկերչական իրեր: Բելգիա՝ հանքանյութեր և ադամանդ, դեպի Բուլղարիա, Գերմանիա, Չինաստան ու Նիդերլանդներ արտահանման հիմնական մասը կրկին հանքանյութերն են: Դեպի Իրան արտահանման կազմում 90%-ն էլեկտրաէներգիան է, որի դիմաց Հայաստանը գազ է ստանում: Իրաք արտահանում ենք հիմնականում ծխախոտ ու վիսկի: Կանադային վաճառում ենք ոսկի (դորե ձուլվածքի տեսքով), ԱՄՆ-ին՝ ալյումինե նրբաթիթեղ, ադամանդ ու կոնյակ, Շվեյցարիային՝ ադամանդ, իրեր՝ թանկարժեք մետաղներից ու ժամացույցի կորպուսներ, իսկ Վրաստանին՝ ալկոհոլային խմիչք, հանքանյութ, ծխախոտ, շիշ և այլն:

Արտահանման 80%-ից ավելին կրկին զբաղեցրել է չորս ապրանքախումբ


Հայաստանի արտահանման կազմն ըստ ապրանքախմբերի վերջին առնվազն 10-ը տարում էական փոփոխությունների չի ենթարկվել: Ըստ խոշորացված ապրանքախմբերի արտահանումը կենտրոնացված է 4-5 խմբերի շուրջ, որոնք գրավում են ընդհանուր ծավալի շուրջ 80%-ը: Դա նշանակում է, որ արտահանումից ստացվող եկամուտները մեծ կախվածություն ունեն նշված ապրանքների համաշխարհային գներից:

ՀՀ արտահանման ծավալներն ըստ ապրանքային բաժինների (%)



Արտահանման ընդհանուր ցուցանիշի 20% աճը հիմնականում ապահովել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր ապրանքախումբն ու պատրաստի սնունդը: Պատրաստի սնունդի արտահանումն աճել է 28.6%-ով:

Աճել է նաև բուսական ծագման արտադրանքի արտահանումը՝ 83.2%-ով, մանածագործական իրերինը՝ 36.7%-ով, սարքեր և ապարատներինը՝ 27,7%-ով:



Փոխարենը նվազել է հանքահումքի արտահանումը՝ 1,3%-ով, կենդանական ծագման արտադրանքինը՝ 23,7%-ով, ինչպես նաև ոչ թանկարժեք մետաղներ ու դրանցից պատրաստված իրեր ապրանքախմբի ծավալները՝ 3,1%-ով: Մնացած ապրանքների մասով փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել արտահանման վրա:

Այսպիսով, 2016թ-ին Հայաստանից արտահանման 20% աճը մասամբ պայմանավորված է համեմատվող ցուցանիշի ցածր մակարդակով (2015թ-ի անկմամբ): Աճը գրանցվել է մեծապես դեպի 6-7 երկրներ արտահանման ավելացման հաշվին, որոնց շարքում առավել էական դեր են ունեցել երեքը՝ Ռուսաստան, Բուլղարիա ու ԱՄՆ: Իսկ ապրանքների շարքից աճն հիմնականում ապահովել է երկու ապրանքախումբ՝



պատրաստի սնունդ, ոսկերչական իրեր ու ադամանդ:

2016թ. հունվար ամսվա դրությամբ, Հայաստանի Հանրապետությունից ընդհանուր առմամբ արտահանվել է 1313 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 539 տոննայի դիմաց:

Այդ թվում՝ արտահանվել է 259 տոննա վարունգ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0 տոննայի դիմաց, 197 տոննա լոլիկ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2 տոննայի դիմաց, 294 տոննա կարտոֆիլ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6 տոննայի դիմաց, 76 տոննա կանաչի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 32 տոննայի դիմաց: Արտահանվել է նաև 184 տոննա խնձոր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3 տոննայի դիմաց, 135 տոննա խաղող՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 116 տոննայի դիմաց: Հայկական թարմ պտուղ-բանջարեղենն արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Շվեյցարիա:



Թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման ցիկլը



ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

